

ԲԺ. Կ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱԼ
ԱՏԵՄՆԵՐԻ ՄԵՍԻՆ

ZUSAMMENFASSUNG

616.31

26078

н-91 Панкавицк, 4.

Был цветок 5 цветков
один цветок: 1.

ԲԺ. Կ. ՊՈՒԿԱՍՅԱՆ

616.31

Կ-91

ԱՍՏՎԱԿԱՐԱՆ Հ 1881 թ.

ՊԵՏՎԻ ՎԵՐԱԿՐՈՆ ՄԱՍԻՆ
ԻՆՉ ՊԵՏՎԻ Ե ԳԻՏԵՆԱԼ
ԱՏԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Խ ԼԱԿԱՀԻ
Ո ՀԱՇ Օ ՏԱԲԱՀ Ո ՀԱՇ

(Հայաստանի բանկը)
Ապման, Եպեռն, 1881 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

1946

Նկարներ՝ ՍԴԻՀՆ ՊՈՒՆԿՏՈՎԱՆԻ

A —
16578

К. ГУКАСЯН
ЧТО НАДО ЗНАТЬ О ЗУБАХ

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946 г.

ՆԱԽԱԲԱՆ

Ո՞ւմ է հարկավոր համոզել, որ առողջ լինելու համար, ուտելուց բացի, հարկավոր է նաև մաքսիմալ օգուտ ստանալ կերածից: Որ դրա համար անհրաժեշտ է առողջ ատամներ ունենալ և պահպանել նրանց՝ այս ևս շատերը գիտեն, բայց միշտ չէ, որ մարդիկ հոգատար են գեղի իրենց ատամները. շատերը նրանց մասին հիշում են միայն այն ժամանակ, երբ նրանցից արդեն բան չի մնացել, կամ շատ քիչ բան կարելի է փրկել: Սա մասսամբ պետք է բացատրել նրանով, որ մարդիկ հույս են դնում արհեստական ատամների վրա, առանց հասկանալու, որ արհեստական ատամները երբեք չեն կարող փոխարինել իսկական ատամներին: Լինում են մարդիկ, որոնք իրենց ատամները չեն բուժում և դա պատճառաբանում են նրանով, որ վախենում են ցավից: Այս պատճառաբանությունն անհիմն է: Բուժումից չպետք է խուսափել, մանավանդ որ սովետական ատամնաբուժությունն այսօր հարուստ է ամեն տեսակ հիվանդություններն առանց ցավի բուժելու միջոցներով:

Չբուժված ատամի հիվանդությունը բարդանում է և տասնյակ անգամ ավելի ցավ պատճառում, քան կարող է լինել բուժման ընթացքում:

Ատամնացավը անխուսափելի չէ և կարելի է այնպես անել, որ ամբողջ կյանքի ընթացքում ատամը երբեք չցավի: Մարդու բերնախորշը նրա օրգանիզմի ամենակարևոր մասերից մեկն է և միանգամայն համոզված կարելի է ասել, որ չկա առողջ մարդ առանց առողջ բերնախոռոչի ու ատամների. հետեւապես ամեն մի-

անհատ ծանոթ պետք է լինի բերնախոռոչի և ատամների հիգիենայի հիմունքներին, նրանց նշանակությանը, նրանց կառուցվածքին, հիվանդության պատճառներին և մի շարք ուղիշ տարրական դիտելիքներին, որպեսզի ավելի կազմակերպված, ավելի դիտակցորեն պայքարի առողջ օրգանիզմի համար:

Այս է մեր փոքրիկ աշխատության նպատակը:

ՀԵՂԻՆԱԿ

1. ԱՏԱՄՆԵՐԻ ՍԱՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ատամների հիվանդությունների պրոֆիլակտիկացի, այսինքն նախազգուշական միջոցառումների մասին խոսելիս հարցի լուսաբանումը պետք է սկսել սկզբից՝ ատամների սաղմնավորման մոմենտից:

Առողջ ատամների հիմքը դրվում է դեռ հղիության սկզբում, երեխայի ներարդանդային կյանքում։ Եվ առաջ այս մոմենտից էլ հարկավոր է լայն մասսայական սան-լուս-բացատրական աշխատանք ծավալել աշխատավորության մեջ, դիտակցական պայքարի հանելով նրան՝ առողջ սերնդի առողջ մանկության համար։ Ատամների սաղմնավորումը սկսվում է հղիության 2-րդ ամսի վերջերից, դրա համար էլ հղի կնոջից պահանջվում է միանդամայն դիտակից վերաբերմունք դեպի իր կոչումը, պահանջվում է համապատասխան ռեժիմ։ Նա պետք է սերտ կապ պահպանի կոնսուլտացիայի հետ, որտեղ նրան համապատասխան ցուցումներ կտան նրա սնման ու ապրելակերպի մասին։

Երեխայի օրգանիզմի զարգացման հետ միասին անընդհատ աճում ու զարգանում են նաև ատամները, իսկ նրանց աճման ու ամրացման համար անհրաժեշտ է, որպեսզի հղի կինը հատուկ ուշադրություն դարձնի իր սննդին, հարստացնելով այն առանձնապես բանջտրեղենով և պառուզներով, որոնք մեծ չափով կրային աղեր են պարունակում։ Հղի կինն այս հանգամանքի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնի, որովհետեւ, բացի իր օրգանիզմի ամենօրյա ծախսերից, նրան անհրաժեշտ են որոշ քանակությամբ նյութեր՝ մանկական նոր կազմավորվող օրգանիզմի համար։ Նը-

բանցից ամենակարևորներն են վիտամինները և կրա-
յին աղերը:

2. ՍՆՆԴԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՎՐԱ

Ի՞նչպես է անդրադառնում կրային աղերի պահպառ
մոր և մանկան օրգանիզմի վրա:

Երբ օրական ընդունվող քանակը չի համապատաս-
խանում պահանջին, այսինքն երբ կրային աղերի մուտ-
քըն ավելի քիչ է լինում, քան ելքը, ապա ատամների
սաղմերն ավելի քիչ բաժին են ստանում և մնում են
թույլ, հետագայում ավելի հեշտ են հիվանդանում ա-
տամնակերով (կարիեսով): Բացի դրանից, հղիության
շրջանում մոր ատամները երբեմն սկսում են հիվան-
դանալ ատամնակերով: Դա նույնպես պետք է բացա-
տրել մոր օրգանիզմի կրային աղերի պակասությամբ,
որովհետեւ նրանց մեծագույն մասը գնում է մանկան
կմախքի կազմավորման համար:

3. ԲԵՐԱՆԻ ԵՎ ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հղիության ընթացքում, մինչև ծննդատուն գնա-
լը, հղի կնոջ ամբողջ բերնախոռոչը և ատամները պետք
է վնեն առողջ վիճակում:

Միանգամայն սխալ է այն կարծիքը, թե հղիու-
թյան ընթացքում ատամների բուժումը կարող է վատ-
անդրադառնալ առողջության վրա: Ծնդհակառակը, ե-
թե հղի կնոջ բերանում փչացած ատամներ կամ ար-
մատներ կան, նա դրանով վտանգի է ենթարկում թե
իր և թե զարգացող մանկան առողջությունը, որով-
հետեւ այդպիսի ատամների մեջ բուն դրած վարակը թե
անմիջականորեն և թե արյան միջոցով տարածվում է
հղի կնոջ ամբողջ օրգանիզմում:

Կանանց լնդերը հղիության ընթացքում առավել
առ ենթակա են բորբոքումների, մանավանդ սկզբի ա-

միսներին։ Հետեաբար անհրաժեշտ է, որ հղի կինն ավելի աշալուրջ լինի իր ատամների ու բերնախռովչի նկատմամբ, և սիստեմատիկորեն բուժվելով, վերացնի զեֆեկտները, վերամշակել տա ընկած պլոմբները, հեռացնել տա անհուսալի ատամները, ատամնաքարերը, բուժի լնդերը, մի խոսքով՝ կարգի բերի ամբողջ բերնախռովչը։

4. ԱՏԱՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԾՆԴՅԱՆ ԽՆԱՄՔԸ

Երեխայի ծնվելուց հետո առաջին կաթնատամները երեւմ են 6—8 ամսական հասակում, հետագայում փոխարինվում են հիմնական ատամներով։

Այս պրոցեսը տևում է մինչև 13—14 տարեկան հասակը. որա հետ համապատասխանորեն աճում է և նրա սննդի բաղկացուցիչ մասերի քանակը, ուստի ծնողները պետք է շարունակ հետեւն, որ երեխայի սնունդը լինի լիարժեք և պարունակի հավասար չափով թե կրային աղեր, թե վիտամիններ և թե այլ նյութեր։

Երբ մայրը դեռ կրծքով է կերակրում երեխային, նա չպետք է մոռանա իր սննման կանոնը, որովհետեւ երեխան նրա միջոցով է ստանում իրեն անհրաժեշտ սնունդը. իսկ հետագայում կոնսուլտացիան պետք է շարունակի մնալ մոր ամենալավ խորհրդատուն՝ երեխայի զարգացման և խնամքի հարցերում։

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել մի հանգամանք ևս. ժողովրդի մեջ տարածված է մի սխալ կարծիք, որ իբր թե երեխայի ատամների դուրս գալը կապված է մի շարք խանդարումների և հիվանդությունների, օրինակ՝ լուծի և հազի հետ։ Սա, իհարկե, սխալ և անհիմն կարծիք է։

Ճիշտ է, երբեմն ատամները դուրս գալու շրջանում նկատվում են թե հազ և թե լուծ, բայց այդ խանդարումները ոչ մի կապ չունեն ատամների հետ։ Զէ՞ ոք ատամների դուրս գալը միանդամայն նորմալ և ֆիզիո-

լողիական երեսութիւն է, էլ ինչո՞ւ պիտի նա կապված
մնի որևէ հիվանդագին արտահայտության հետ:
Բացատրենք դրա պատճառները:

Երբ դալիս է երեխայի ատամներ հանելու ժամա-
նակը, երեխայի լնդերը սկսում են քոր դալ, այդ
պատճառով ավելանում է նրա առանց այն էլ առատ
թքահոսությունը, և եթե մայրը չի հետեւում ու երե-
խայի կուրծքը չի պաշտպանում թրջվելուց, ապա
թուքը թրջում է երեխայի շորերը և մըսեցնելով
կուրծքը, առաջ է բերում բրոնխիտ կոչված հիվանդու-
թյունը, որ արտահայտվում է հազով, կամ երբ երե-
խան անհանգստություն զգալով լնդերի կողմից, կամ
որևէ ուրիշ պատճառից՝ սկսում է լալ, որոշ մայրեր,
առանց պարզելու լացի իսկական պատճառը, նրան
հանդստացնելու համար ամեն բռպե իրենց ստիճանը
դնում են երեխայի բերանը, և չափից դուրս շատ կե-
քակրելով, ծանրաբեռնում են երեխայի ստամոքսը, ա-
ռաջացնելով լուծ: Այս դեպքում ինքը՝ մայրն է մեղա-
վոր:

5. ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶ- ԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՍՍՂՄԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Երեխայի կաթնատամները կամ հիմնական ատամ-
ները դուրս գալուց հետո, երբեմն նրանց պսակի զանա-
զան մասերում տեսնում ենք շերտավորումներ, կար-
ծես այդ աեղերում ատամի պսակը կիսասղոցված լինի:
Ի՞նչ հետքեր են դրանք: Տվյալ ատամի սաղմի զար-
գացման այդ շրջանում երեխան հիվանդացել է որևէ
հիվանդությամբ և երեխայի սնունդը խանգարվելու
հետևանքով խանգարվել է նաև ատամի աճող սաղմի
սնունդը, այդ պատճառով պսակի վրա հետքեր են մնա-
յել:


Հետազայում, շատ անգամ այդ տեղերից էլ սկըս-
վում է ատամնակերը (կարիեսը), որովհետեւ կրային
աղերի պակասության կամ ընդհանրապես էմալի բա-

շակայության պատճառով, դրանք ատամի ամենաթույլ կետերն են հանդիսանում:

6. ԱՏԱՄՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ (ԾԿԹԵԼԸ)

ա) Կաքնատամներ

Մարդու կյանքի ընթացքում նրա ատամները երկու անգամ են դուրս գալիս. առաջին անգամ դուրս եկող առամները կոչվում են կաթնատամներ, որոնք սկսում են դուրս գալ երեխայի 6—8 ամսական հասակից և լրիվ դուրս են գալիս մինչև $2\frac{1}{2}$ —3 տարեկան հասակը. սրանք թվով լինում են քսան հատ. տասը ստորին ծնոտին, տասն էլ վերին ծնոտին, և զասավորվում են համասարապես, հինգը ծնոտի մի կողմում և մյուս հինգը՝ մյուս կողմում:



Նկ. 1. Մանկական ստորին ծնոտի կեսը՝ Վերեսում կաթնատամներն են, իսկ նրանց տակ՝ հիմնական ատամների սաղմերը:

Այդ ժամանակ ծնոտի մեջ, կաթնատամների արմատների տակ արդեն լինում են հիմնական ատամների սաղմերը, որոնք հետագայում բարձրանալով, բռնում

են կաթնատամների տեղը, իսկ վերջիններիս արմատները ներծծվելով, ընկնում են, գոլխարինվելով հիմնական ատամներով (նկար 1):

Բոլոր ատամները միատեսակ չեն լինում, նրանք ունեն տարբեր ձևեր և դրանց համապատասխան էլ տարբեր անուններ. օրինակ՝ շրթունքների սանձից սկսած՝ ծնոտի ամեն մի կողմում ունենք 2 կտրիչներ, որոնցից առաջինը կոչվում է կենտրոնական, իսկ երկրորդը՝ կողմնային. ապա դալիս են՝ 1 ժանիք և 2 սեղանատամներ (1-ին և 2-րդ):

Կաթնատամները դուրս են դալիս հետեւյալ հերթականությամբ.

6—8 ամսական հասակում՝ կենտրոնական կտրիչները:

8—12 » » կողմնային «

12—16 » » 1-ին կաթնաղորիֆները:

15—20 » » ժանիքները:

20—30 » » 2-րդ կաթնաղորիֆները:

Նորմալ դեպքում միշտ, որպես կանոն, ատամը սկզբում դուրս է դալիս ստորին ծնոտի վրա, ապա համապատասխան ատամը՝ վերին ծնոտի վրա:

բ) Հիմնական ատամներ.

Հիմնական ատամները լինում են թվով 32 հատ. նրանք սկսում են դուրս դալ վեց տարեկան հասակից և նրանցից 28 հատը մինչև 13—14 տարեկան հասակն արդեն դուրս եկած են լինում: Վերջին չորս հատը երբեմն կարող են շատ ուշանալ և դուրս դալ 17-ից մինչև 25 տարեկան հասակում, երբեմն ավելի ուշ. երբեմն էլ կարող են բոլորովին դուրս չդալ:

Դրանք այսպես կոչված՝ իմաստության ատամներն են, որոնք շատ անդամ դուրս են դալիս ահաղին դժվարություններով ու ցավերով և մեծ տանջանքներ են պատճառում մարդուն:

Այդ ատամները ինչքան ուշ են դուրս դալիս, այնքան էլ չուտ փչանում են: Իմաստության ատամների գժվար դուրս դալը բացատրվում է նրանով, որ նրանք ընկած են ծնոտի անկյունում և աղատ տեղ չունեն:

գուրս գալու։ Դրս համար էլ շատ անգամ այդ ատամ-ները երկալուն պես, նրանց հեռացնում են՝ հետագա բարդություններից խուսափելու համար։

Հիմնական ատամները գուրս են գալիս հետեւյալ հերթականությամբ։

6—7 տարեկան հասակում՝ 1-ին սեղանատամները կամ մեծ աղորիքները։

7—8 » » կենտրոնական կտրիչները։

8—9 » » կողմնային կտրիչները։

9—11 » » 1-ին փոքր աղորիքները։

11—12 » » 2-րդ » »

12—14 » » ժանիքները և 2-րդ մեծ աղորիքները, իսկ 17-ից մինչև 20—25 տարեկան հասակում և ավելի ուշ՝ 3-րդ մեծ աղորիքները, կամ ինչպես ասացինք, իմաստության ատամները։

Առաջին հիմնական մեծ աղորիքը, կամ ինչպես անվանում են նրան, վեցամյակը, դուրս է գալիս կաթնաղորիքների հետեւմ, իսկ կաթնաղորիքների տեղը բռնում են հիմնական ատամներից՝ փոքր աղորիքները։ Նշված հերթականությամբ և վերոհիշյալ ժամկետներին դուրս են դալիս հիմնական ատամները, իսկ համապատասխան կաթնատամները սկսում են ընկնել։ Այդ ժամանակամիջոցում կաթնատամների արմատները տակից բարձրացող հիմնական ատամների ազդեցության տակ սկսում են աստիճանաբար ներծծվել, նրանցից մնում է միայն պսակը, որը չարժվում և շատ անգամ որևէ կոչտ բան ծամելիս պոկվում է ու ընկնում և նրա տակից երեսում է դուրս եկող հիմնական ատամի պսակը։

7. ԱՏԱՄՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԽԱՏՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երբ կաթնատամները սկսում են շարժվել և գալիս է հիմնական ատամով նրանց փոխարինվելու ժամանակը, նրանց պետք է հեռացնել, որովհետեւ երբեմն

պատճառ են լինում հիմնական ատամի ծովելուն և
 շարքից գուրս ծկթելուն. այդպիսի գեղքերում, նրանց
 հետացնելուց հետո, հիմնական ատամները նորից
 դնում են իրենց տեղը: Բացի դրանից, երեխայի բե-
 րանում երբեմն լինում են սովորական քանակից ավելի
 ատամներ (գերկոմպլեքտային), որոնք խանգարում են
 հիմնական ատամների ճիշտ գուրս գալուն, երբեմն
 նույնիսկ ուտելուն, խոսելուն, քերում են բերանի լոր-
 ձաթաղանթը, վերքեր առաջացնում և այլն: Այդպիսի
 ատամները նույնպես ենթակա են հեռացման: Ցավոք
 սրտի պետք է նշենք մի հանգամանք, որ շատ անդամ
 ծնողները տարիների ընթացքում չեն հետաքրքրվում
 իրենց երեխաների բերնախոռոչի և ատամների դրու-
 թյամբ. դրա հետեւանքով վերջիններիս ատամները
 ժամանակից շուտ են քայլայվում. երեխաներին ա-
 տամնարութի մոտ են տանում այն ժամանակ, երբ հի-
 վանդությունը չափաղանց մեծ ավերածություններ է
 գործու:

Ինչ խոսք, որ դա միանգամայն անթույլատրեյի է,
 երբեմն անդրադառնում է երեխայի թե առողջության
 և թե ծնոտների վրա, աղափառելով նրա գեմքը:

Ծնողները, մտնկապարտեղի աշխատողները և բո-
 լոր նրանք, որոնց խնամքին են հանձնված երեխաները,
 պարտավոր են հաճախակի ստուգել երեխաների բե-
 րանի և ատամների դրությունը և որևէ դեֆեկտ հայ-
 տաբերելու դեպքում, երեխային անմիջապես տանել
 ատամնարութական կարինետ՝ համապատասխան բուժ-
 օգնություն ստանալու համար:

8. ՀԱՐԿԱՎՈՐԻ Է ԲՈՒԺԵԼ ԿԱԹՆԱՄՆԵՐԸ, ԹԵ ՈՉ

Ինչպես տեսանք, երեխաների կաթնատամները
 թվով ամեյի քիչ են, քան մեծերի հիմնական ատամնե-
 րը: Կաթնատամների յարրում բացակայում են երկու
 փոքր աղոռիքներ և մեկական իմաստության ատամ
 ծնոտի ամեն մի քառորդում, որովհետև երեխաներին

ծնոտներն ավելի փոքր են և չեն կարող տեղավորել
32 ատամ:

Շատերն այն սխալ կարծիքին են, թե քանի որ
կաթնատամները փոխարինվելու են հիմնական ատամ-
ներով, կարիք չկա նրանց բուժել: Այդ միանգամայն
անհիմն մոտեցում է, որը կարող է երեխային շատ
թանկ նստել:

Մենք վերեռում տեսանք, թե ինչ հերթականու-
թյամբ և ինչ ժամկետներում են դուրս գալիս հիմնա-
կան ատամները. ատամների փոխանակման նորմալ
պրոցեսի համար անհրաժեշտ է, որ ամեն մի կաթնա-
տամ ճիշտ իր ժամանակին ընկնի և փոխարինվի հիմ-
նական ատամնով: Եթե կաթնատամը ժամանակից շուտ
է հիվանդանում, անհրաժեշտ է բուժել այն և պահ-
պանել, մինչև որ բարձրանա նրան փոխարինող հիմ-
նական ատամը: Իսկ եթե կաթնատամը հիվանդ է,
այդ ժամկետները խախտվում են, ատամի մեջ
սկսվում են քայլայման և բորբոքման պրոցեսներ,
բորբոքումն անցնում է ատամը շրջապատող փափուկ
հյուսվածքներին, առաջանում են թարախակալումներ,
իսկ այդ թարախն արդեն սկսում է ուտել ծնոտի
ոսկը, շատ անգամ հասնում է կաթնատամի տակը
գտնվող հիմնական ատամի սաղմին, նրան էլ ընդ-
զրկում բորբոքման մեջ և թարախոտելով սաղմը,
մեղցնում է նրան ու մեծ թարախակույտեր առաջ-
նում: Այդ դեպքում, իհարկե, այդպիսի հիմնական
ատամի սաղմը դադարում է զարգանալուց և երեխան
իր ամրող կյանքում զրկվում է այդ ատամից:

Ծնոտները զարգանում են ատամների հետ, իսկ
եթե մի կողմում բազակայում են այդ ատամները,
դանդաղում է նաև ծնոտի աճը, այդ կողմում ծնոտը
կարծ է մնում, և երբ սկսում են դուրս գալ հիմնական
ատամները, նրանք չեն տեղավորվում և ծուռ և մուռ
են զասակորիվում:

Ահա թե ինչ մեծ նշանակություն ունի կաթնա-
տամների ժամանակին բուժելու և նրանց պահպանումը
մինչև փոխարինման ժամկետները:

9. ԱՏԱՄՆԵՐԻ ԿԱՌՈՒԻՑՎԱԾՔԸ

ա) Արտաքին կառուցվածքը.

Անհրաժեշտ է մի փոքր ծանոթանալ ատամի կառուցվածքի հետ, որպեսզի հասկանալի լինեն նրա հիվանդությունների առաջացման պատճառները և այն ճանապարհները, որով վարակը մտնում է ատամի մեջ, հիվանդացնում նրան և ապա ատամից անցնում ավելի խորը և տալիս այնպիսի բարդություններ, որոնք շատ անդամ վտանգավոր են դառնում նույնիսկ կյանքի համար:

Ատամի երեացող մասը կոչվում է ատամի պսակ, որը ծածկված է սպիտակավուն փայլուն նյութով—էմալով:


Էմալը մեր օրգանիզմի ամենակարծր հյուսվածքն է, որը տասնյակ տարիների ընթացքում հիանալի կերպով պաշտպանում է ատամը և միայն հասակավորների մոտ, երկար տարիներ ծամելու հետևանքով, տեղ-տեղ մաշվում է, բացելով ատամի հիմնական հյուսվածքը՝ դենտինը:

Դենտինը դեղնավուն, ոսկրանման մի նյութ է, որ կազմում է ատամի հիմնական մասը և ամրության տեսակետից մեր օրգանիզմի հյուսվածքների մեջ գրավում է էմալից հետո երկրորդ տեղը: Ատամի այս հյուսվածքների ամրությունն ու դիմացկունությունը բացատրվում է նրանց կազմության մեջ գտնվող կրային աղերի մեծ քանակով, այսինքն բարձր տոկոսային հարաբերությամբ, օրինակ, եթե սովորական ոսկրը պարունակում է մոտ 65 տոկոս կրային աղեր, ապա դենտինը պարունակում է մոտ 72, իսկ էմալը՝ մոտ 95 տոկոս:

Դենտինը և էմալը հիմնականում կրային աղերով հաղենում են իրենց կազմավորման և աճման շրջանում. ահա թե ինչու մանկական հասակում ճիշտ կազմակերպված սնունդը մեծ նշանակություն ունի երեխայի

ամբողջ կյանքում, նրա ատամների դիմացկունության
տեսակետից:

Ատամների պսակները տարբեր ձևեր ունեն, նա-



Նկ. 2. Չափահաս մարդու թուան չիմնական
ատամները ձեզ և դասավորության ըստ հերթակա-
նության

1. Կենտրոնական կորիչներ, 2. Եղանակին կորիչներ,
3. Ժանիքներ, 4. 1 ին փորբ աղոսիքներ, 5. 2-րդ փորբ
աղոսիքներ, 6. 1 ին մեծ աղոսիքներ, 7. 2-րդ մեծ
աղոսիքներ. Վերջում երեսը են իժամանության
առանձներէ

յած թե ինչ աշխատանք են կատարում. օրինակ՝
կորիչների պսակները դուրի նման են և վերջանում են
սուր, կորող եղբով. Ժանիքների պսակները կոնաձև

Են և վերջանում են նույնպես սուր, բայց կլոր թմրիկով՝ կերակրանյութը հեշտությամբ պատառուելու և պակելու համար. աղորիքները՝ կերակրանյութը տրուրելու, աղալու համար են և օժտված են լայն, ծամող մակերեսներով, որ ունեն թմրիկներ. նրանք բաժանվում են երկու խմբի՝ փոքր աղորիքներ, որոնցից ամեն մեկն իր ծամող մակերեսի վրա ունի երկուական թմրիկ, և մեծ աղորիքներ՝ որոնք ունեն 3—5 թմրիկ:

Պսակի չարունակությունը կազմում է ատամի արմատը. տարբեր ատամներ տարբեր քանակի արմատներ ունեն. օրինակ՝ կտրիչները, ժանիքները և փոքր աղորիքներն ունեն մեկական արմատներ. բացառություն է կազմում միայն վերին ծնոտի 1-ին փոքր աղորիքը, որը երբեմն կարող է 2 արմատ ունենալ: Մեծ աղորիքները ստորին ծնոտում ունեն 2-ական, իսկ վերին ծնոտում 3-ական արմատներ. բացառություն են կազմում իմաստության ատամները (3-րդ մեծ աղորիքները), որոնք կարող են ունենալ 1-ից մինչև 4—5 արմատներ:

Պսակից դեպի արմատների անցման մասը կոչվում է ատամի վզիկ, որը նորմալ դեպքում ծածկված է լնդեղրով: Լնդերի հիվանդության դեպքերում, երբ նրանք թուլանում են ու հետ են քաշվում, բացվում են ատամների վզիկները, որոնք չափազանց զգայուն են, որովհետև այստեղ էմալ չկա, իսկ բացված հյուսվածքը դա դենտինն է, որը հարուստ է չափազանց բարակ ներվային թելիկներով: Ահա թե ինչու ատամները վզիկների շրջանում այդքան զգայուն են: Ընդհանրապես էմալի մաշվելու կամ հիվանդանալու դեպքում, երբ քայքայվում ու բացվում է դենտինը, վերջինս սկզբնական շրջանում, քանի դեռ կենդանի է, միշտ էլ չափազանց զգայուն է դեպի սառը, տաքը, քաղցրը, թթուն, աղին, ինչպես նաև որևէ կոչտ բանով չոշափելիս:

Վզիկների բացվելու պատճառը ամենից հաճախ և համարյա միշտ լինում են ատամնաքարերը, որոնք

աեպի նման խրվում են լնդերի ու ատամների արանքը
և կամաց-կամաց լինդը հետ քաշելով, բաց են անում
ատամների վզիկները:

բ) Ներքին կառուցվածքը: Ատամի մեջ, գենտինի
կենտրոնում, կամի խռովչ, որն իր ձևով նման է ատա-
մին, այսինքն պսակային մասում լայն է, իսկ արմա-
տային մասում ընդունում է խողովակի ձև ու արմատի
ծայրին վերջանում մի փոքրիկ անցքով, որ այդպես էլ
կոչվում է—արմատային անցք:

Ատամի այդ խռովչի սեղ

է գտնվում ատամնամիջուկը,
կամ ինչպես նրան անվանում
են, ատամի - պուլպան: Դա
մի գուացություն է, որի
կազմության մեջ մտնում են
արյունատար անօթներ, ներ-
փային թելիկներ, ավշային
անոթներ և այլն. այդ բոլո-
րը մտնում է արուատային
փոքրիկ անցքով և լցնում
ատամի խռովչը: Ատամնամի-
ջուկի գերը շատ մեծ է ատա-
մամի համար, որպիսեւ նա
անում է ատամի կարծր հյուս-
վածքները: Եթե չլինի պուլ-
պան, ատամը զ կվում է



Նկ. 3. Վերին ձնոտի մեծ
աղբիքը բացված: Նրանում
ենում է ասամնամիջ վկը:
աննդից, կորցնում իր գիմացկունությունը: Նրա կարծր
հյուսվածքները այլևս չեն կարող զիմազրել այն ու-
ժին, որ մենք գործադրում ենք ծամելու ժամանակ, և
հեշտությամբ սկսում են փշրվել ու թափվել. վերջի-
վերջո ատամից մնում է միայն նրա արմատը:

10. ԱՏԱՄՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՄՐԱՑԱԾ ԾՆՈՏԻՆ

Ծնոտների եղբերն ունեն փչակավոր կառուցվածք
և ամեն մի ատամի արմատ ունի համապատասխան



բուն, որի մեջ նա ամուր կերպով նստած է, կազմելով
անշարժ հող (նկար4):



Նկ. 4. Ստորին ծնոտ՝ հանգած ատամ-
ներով, երկում են ատամնաբները:

Ջոցով ատամի արմատը սր-
նունդ է ստանում նրա մեջ
գտնվող արյունոտար ա-
նոթների ցանցի սիջով:
Երբեմն, երբ հիվանդանում
է արդ արմատալին վեր-
նոսկրը, ատամը չափազանց
զղայուն է դառնում ամեն
տեսակ ձնշման նկատմամբ
և հիվանդը չի կարողանում
արդ ատամով ծանել. թր-
վում է թե ատամը բարձ-
րացել է իր տեղից: Դա նկ. 5. Ստամների և ատամնաբն-
արդեն բարդ հիվանդու-
թյուն է և անհրաժեշտ է կապող վերնոսկրի թելիկների
դիմել ատամնաբուժին:

Բացի դրանից,
ամեն մի ատամի
արմատ կամ ար-
մատներն ատամնա-
բների հետ կապված
են բարակ թելիկ-
ների խրձիկներով,
որոնք շատ ամուր
են (նկ. 5):

Այդ հլուսված-
քո, որ կազում է
ատամի արմատը ա-
տամների հետ, կոչ-
վում է արմատի
վերնոսկր, որի մի-



ների կտրվածքը, երկում են ա-
տամները՝ ատամնաբների հետ
կապող վերնոսկրի թելիկների
խրձիկները:

11. ԱՏԱՄՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչո՞ւ են հիվանդանում ատամները։ Այս հարցը կազմում է մեր գրքույկի առանցքը, որովհետեւ եթե մանրամասն իմանանք այն պատճառները, որոնք ատամի հիվանդություն են առաջացնում, կարող ենք հաջողությամբ պայքարել այդ պատճառների դեմ, մեր բերնախոռոչի և ատամների խնամքը այնպես կազմակերպել, որ վերացնենք բոլոր պատճառներն ու վնասակար ազդեցությունները։

Մեր բերնախոռոչում մեծ քանակությամբ միկրոբներ կան։ Սովորական պայմաններում, այսինքն երբ մեր օրգանիզմն առողջ է, հետևապես և ավելի ուժեղ ու դիմացկուն, քան միկրոբների ազդեցությունը, մենք չենք զգում նրանց վնասակարությունը։ Բայց հենց որ որևէ պատճառով մեր օրգանիզմը թուլանում է, օրինակ, զանազան ինֆեկցիոն հիվանդություններից հետո (գրիպուլ, անգինա, տիֆեր, կարմրուկ, քութեշ և այլն), նրանք բոլորն էլ գլուխ են բարձրացնում և զանազան հիվանդություններ առաջացնում, մեծ մասամբ բերանի լորձաթաղանթի բորբոքումներ ու խոցեր։

Այդ միկրոբների ապրելու և զարգանալու համար բերնախոռոչը շատ հարմար տեղ է, որովհետեւ նրանք այդտեղ գտնում են այն բոլոր պայմանները, որ հարկավոր են իրենց, այսինքն ջերմություն, խոնավություն և սնունդ։ Երբ մենք գիշերները քնելուց առաջ չենք ողողում մեր բերանը, ատամների արանքներում մնացած կերակրանյութերի մնացորդներն այդ միկրոբների ազդեցության հետևանքով սկսում են քայքայլել, իսկ քայքայման այդ պրոցեսում թթուներ են առաջանում (գլխավորապես կաթնաթթու)։ Եթե մենք փորձնք մի կտոր ոսկը գցել որևէ թթվի թեկուղ ամենաթթույլ լուծույթի մեջ, ապա մի քանի օրից հետո նակակղի, այսինքն նրա միջից կլուծվեն կրաւին աղերր, որոնք չափազանց մեծ նշանակություն ունեն ատամների կարծր հյուսվածքների դիմացկունության հա-

Քար: Ահա այդպես էլ բերանում, կերակրանյութերի քայքայման հետևանքով գոյացած թթուների աղղեցության տակ, ատամի կարծը հյուսվածքները՝ սկզբում էմալը, ապա և դենտինը, կամաց-կամաց կորցնելով կրային աղերը, թուլանում են, կակլում և մանր ճեղվածքներ են տալիս այն տեղերում, որտեղ կերակրանյութերը երկար ժամանակ մնում են խցանված (ատամների արանքներում, վզիկների շուրջը, թմբիկների ակոսներում): ‘Դա միկրոբների առաջին հաղթանակն է: Դրանից հետո նրանք ներխուժում են այդ մանր ճեղքերի մեջ և այնտեղ շարունակում իրենց քայքայիչ աշխատանքը:

Բանն այն է, որ բերնախոռոչում կան երկու խումբ հատուկ միկրոբներ ևս, որոնց մի տեսակը ինքն էլ է թթու արտադրում և դրանով ուժեղացնում արդեն բերնախոռոչում եղած թթվի աղղեցությունը, իսկ յուս տեսակը՝ հատկապես դենտին քայքայող է: Իսկ երբ մենք առավոտ-երեկո կանոնավոր կերպով ողողում ենք մեր բերանը և դուրս բերում թե կուտակված թթուները և թե միկրոբների մեծ մասը, դրանով վերացնում ենք վնասակար աղղեցությունը, թարմացնում մեր բերանը և թույլ չենք տալիս, որ էմալն ակսի քայքայվել:

Երբեմն, մեր անխնամ վերաբերմունքի պատճառով, մեր ատամները պաշտպանող արտաքին ամենաառաջեղ և ամենադիմացկուն շերտը՝ էմալը սկսում է տեղ-տեղ թուլանալ, ճեղվածքներ տալ և այնուհետև միկրոբների աղղեցության տակ քայքայվել: Գոյանում են սկզբում փոքր խոռոչներ, որոնք հետո գնալով ավելի ու ավելի են մեծանում:

12. ԱՏԱՄՆԱԿԵՐԻ (ԿԱՐԻԵՍԻ) ՍԿԶԲՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Էմալը պաշտպանում է ատամը արտաքին աղղեցություններից, օրինակ, տաքից, սառից, քաղցրից և այլն. եթե չլիներ ատամների պսակը ծածկող էմալի

այդ շերտը, մենք չէինք կարող առանց ցավերի ոչ ու-
տել, ոչ խմել, որովհետև, ինչպես ասացինք, դենտի-
նը չափազանց զգայուն է:

Ահա այս պատճառով, երբ էմալի մեջ ձեղքեր կամ
փոքր խոռոչներ են գոյանում, այդ կետերում արդեն
բացվում է դենտինը և մենք սկսում ենք ցավ զգալ
քաղցր, սառը, տաք, թթու, աղի գործածելիս։ Սա
նշան է, որ ատամի որևէ մասում արդեն խոռոչ է գո-
յացել և անհրաժեշտ է անմիջապես ձեռնարկել նրա
բուժմանը։

Երբեմն մենք ինքներս արտաքինից կարող ենք
նկատել ատամի վրա գոյացած սպիտակ կամ դորչ
գույնի բիծ այն տեղում, որտեղ սկսվել է արդեն ա-
տամնակերը։

Այս շրջանում հիվանդությունը բուժվում է շատ
արագ։ Հենց միենույն օրը հնարավոր է մաքրել ու
լցնել այդպիսի խոռոչները և բուժումը ոչ մի դեպքում
չպետք է հետաձգել։

13. ՀԵՏԱԳԱՅՈՒՄ Ի՞ՆՉՊԵՍ Կ ԽՈՐԱՆՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Եթե այդ շրջանում ատամը չի բուժվում, ապա
հիվանդության նշանները գնալով ուժեղանում են,
այսինքն ցավը, որ սկզբում տեսում էր մի բոսե, քանի
զնում՝ այնքան երկարատև ու ավելի ուժեղ է դառ-
նում, խոռոչը նույնպես քանի զնում, այնքան ընդար-
ձակվում ու խորանում է։

Դենտինի խողովակաձև կառուցվածքի չնորհիվ,
միկրոբները սկսում են այդ խողովակներով խորանալ
դեպի ատամնամիջուկը և վերջիվերջո հասնելով նրան,
վարակում են և բորբոքում։

Այս շրջանոր, երբ արդեն բորբոքվում է նաև ատամ-
նամիջուկը, հիվանդների համար շատ ցավոտ և տան-
ջալի է բնթանում։ Այդ ժամանակ առաջ են գալիս ար-
դեն ինքնուրույն, առանց որևէ արտաքին պատճառի

սկսվող սոսկալի ցավեր, որոնք առանձնապես ուժեղ են
լինում գիշերները, պառկած ժամանակի:

Հիվանդներից շատերին են ծանօթ այդ սոսկալի
ցավերը, որոնք ոչ մի կերպ չեն հանգստանում: Նոր
միայն հիշելով հիվանդ ատամի մասին, նրանք սկսում
են վազգվել գեղատները կամ բժիշկների տները՝ որևէ
օդնություն ստանալու համար. այնինչ, եթե ժամանա-
կին բուժած լինեին, երբեք անքուն գիշերներ չէին
անցկացնի և փրկած կլինեին նաև իրենց ատամը, խնա-
յած կլինեին իրենց ժամանակը, չէր տուժի նույնպես
նրանց աշխատանքը ոչ տանը, ոչ էլ հիմնարկում:

Այդպիսի գեղքերում հիվանդները շատ անդամ
իրենք են բուժում զանազան պատահական գեղերով,
ատամի վրա լցնում են օղեկոլոն, օղի, յոդ, ատամի
կաթիլներ և մի շարք այլ գեղեր, մի խոսքով՝ անում
են ով ինչ խորհուրդ տա, միայն թե կարողանան ա-
զատվել այդ սոսկալի ցավերից: Շատ հաճախ, այդպի-
սով առաջացնում են զգալի այրվածքներ բերնախոռո-
շի կամ լնդերի լորձաթաղանթի վրա, այնպես որ, հետո
հարկավոր է լինում բուժել ոչ միայն ատամը, ոյլե-
այրվածքներն ու խոցերը, որոնք առաջացել են այդ
գեղանյութերն ինքնագլուխ գործածելուց:

14. ՈՐԻՆ Է ՊԱՏՍՀԱԿԱՆ ԴԵՂԵՐՈՎ ԲՈՒԺՎԵԼՈՒ ՎՆՍՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես վերեւում նշեցինք, այդ գեղանյութերը
այրվածքներ են առաջացնում, որովհետև հիվանդը
ինքը չի կարողանում ինչպես հարկն է օդտվել նրանցից
և փոխանակ միայն ատամի խոռոչի մեջ լցնելու, թա-
փում է լնդերի և լորձաթաղանթի վրա:

Երբեմն այդ գեղանյութերի գործածությունից
ատամնամիջուկը ժամանակավորապես թմրում կամ
մահանում է, և հենց որ ցավն անցնում է կամ թեթևա-
նում, հիվանդը մոռանում է իր հիվանդ ատամի մա-
սին, առանց հաշիվ տալու իրեն, որ դըանով ատամը

Հի բուժվել, այլ միայն ժամանակավորապես թմրել է։ Դրանից հետո դարձյալ չի դիմում բուժվելու, մինչդեռ հիվանդությունը քանի գնում՝ խորանում է, ատամնամիջուկն սկսում է նեխվել ու քայքայվել, հիվանդի քերանից սոսկալի գարշահոտություն է փչում, որ անհանդստացնում է թե հիվանդին և թե նրան շրջապատողներին։ Իսկ միկրոբներն այդ ժամանակ անգործ չեն, նրանք քայքայելով ատամնամիջուկը, ճանապարհ են բացում դեպի ատամը շրջապատող հյուսվածքները և դուրս գալով արմատի ծայրային անցքով, լցվում են արմատը ատամնաբնի հետ կապող հյուսվածքն ու նրան ևս բորբոքում։

15. Ի՞նչ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ ՉԲՈՒԻԺՎԱԾ ԱՏԱՄՆԵՐԸ

Ատամնամիջուկի բորբոքումից հետո, երբ հիվանդը այս շրջանում ևս չի դիմում բուժվելու, վարակը, ինչպես ասացինք, անցնում է արմատի վերնոսկրին և բորբոքում նրան։

Սկսվում է տանջալի ցավերի երկրորդ շրջանը։ Եթե ատամնամիջուկի բորբոքման ժամանակ ցավերն ընդմիջումներով էին լինում, ապա այս շրջանում նույնքան ուժեղ, սոսկալի ցավերն ընթանում են արդեն առանց ընդմիջումների։ Արմատի շուրջն սկսում է թարախ կուտակվել, որն սկզբնական շրջանում դուրս գալու ճանապարհ չունենալով, սկսում է ճնշել ներսից, քայքայում է ատամնաբնի պատերը և ատամը ատամնաբնի հետ կապող հյուսվածքը։ Այդ ժամանակ ատամը սկսում է շարժվել, բարձրանում է տեղից և ամենափոքր ճնշումն անգամ անտանելի ցավեր է պատճառում հիվանդին։ Այն ատամը, որով մինչ այդ ամեն տեսակ կարծր կերակրանյութեր էին ծամվում, այժմ չի դիմանում նույնիսկ լեզվի ամենաթեթև հպումին։ Շատ անգամ հիվանդները, փոխանակ անմիջապես բժշկի օգնության դիմելու, սկսում են զանազան տնային մի-

ջոցներ գործադրել և սպասում են, որ դեմքը կամ լինդն ուռչի, կարծելով, թե «հենց որ ուռչի, ցավն էլ կանցնի»։ Ճիշտ է, ուռուցքի երեան գալուց հետո ցավերը մեղմանում են, բայց ի՞նչ է կատարվում ծնոտի հետ, այս ժամանակները չեն մտածում։

Ատամի արմատի մոտ հավաքված թարախը, քայլականի ծնուռի ոսկրը, ծակում է նրան, հավաքվում լնդի տակ, հետո էլ ծակելով լինդը, դուրս է հոսում։



Նկ. 6:

Բայց միշտ չէ, որ թարախը միայն լինդն է ծակում։ Երբեմն նա ճանապարհ է բացում արտաքինից և դուրս է գալիս մաշկի մակերեսը։ Քանի դեռ հիվանդ ատամը չի բուժված կամ չի հեռացված, այդ անցքից անընդհատ թարախ է հոսում։ Այդ մասում ծնոտի մաշկը կպչում է ոսկրից, տղեղացնելով ու աղավաղելով հիվանդի դեմքը, երբեմն էլ հիվանդությունն ընդունում է սպառնալի գրություն և վտանգի տակ զնում նույնիսկ հիվանդի կյանքը։

Ինչպես է տեղի ունենում այդ։

Երբ թարախն անցնում է ծնոտի ոսկրային պատից,

բորբոքում է ոսկրի մեջ գտնվող ոսկրածուծը. այս
դեպքում հիվանդի տաքությունը բարձրանում է 39—40
աստիճանի, սա արդեն սախաված է լինում պառկել
անկողնում: Բարձր չերմաստիճանը նշան է, որ վարա-
կը կամաց-կամաց անցնում է արդեն արյան մեջ և
թունավորում հիվանդի ամբողջ օրգանիզմը:

Այս գեղաքերում արդեն հարկավոր են լինում լուրջ
և ավելի բարդ միջամտություններ:

Բացի զրանից, ժամանակին չբուժված ատամի
պասկը փթում ու փշրգում է, շատ անդամ նրանից
մնում է միայն ատամի արմատը, որը հարկավոր է
նույնպես ժամանակին հեռացնել, որպեսզի այդ ան-
պետք, քայլքայված ու նեխված արմատը, հիվանդին
երբեք չկանգնեցնի այն բարդությունների առաջ, որ
մենք նկարազբեցինք վերեռում:

16. ԱՏԱՄՆԱԿԵՐԻ (ԿԱՐԻԷՍԻ) ԿԱՊԸ ՈՒՐԻՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Թերեւ ընթերցողը չկարողանա պատկերացնել այն
մեծ կապը, որ կա ատամների հիվանդությունների և
ընդհանուր օրգանիզմի տարրեր հիվանդությունների
միջև:

Բերնախոռոչից, ատամների միջոցով փոխանցված
վարակը, շատ մեծ դեր է խաղում մեր օրգանիզմի խան-
գարումների մեջ: Տասնյակ հիվանդություններ ծնունդ
են առնում այս ճանապարհով, իսկ մենք նրանց պատ-
ճառները փնտռում ենք ամեն տեղ, բացի բերանի խո-
ռոչից:

Շատ անդամ հիվանդը, տառապելով այս կամ այն
հիվանդությամբ, ամխներով բուժվում է զանազան
մասնագետների մոտ, բայց ապարդյուն: Հիվանդը
կորցնում է բուժվելու հույսը, իսկ բժիշկը զարմանում
է հիվանդության համառ բնթացքի, ձեռք առնված
բոլոր միջոցների ապարդյուն լինելու վրա: Շատ ան-
դամ, հիվանդին քննելուց և բերանի խոռոչը աչքաթող

անելուց հետո, բժիշկը հրաժարվում է որևէ վերջնապահումից և այդպիսով թե բուժողի և թե բուժվողի համար չլուծված է մնում հիվանդության սկզբնաղբյուրը:

Իսկ գործը շատ պարզ է: Բավական է բաց անել այդպիսի հիվանդի բերանը, տեսնել շատ անդամ բերանի խոռոչի և ատամների միանդամայն հակասանի-տարական դրությունը, ատամնակերով (կարիեսով) վարակված ատամների փտած արմատները, բորբոքումները, թարախակալումները, որպեսզի միանդամայն պարզ լինի, թե որտեղից, ինչ անսպառ աղբյուրից է անընդհատ թունավորվում այդպիսի բերնախոռոչ ունեցող հիվանդը:

Այդպիսի բերանից, վարակն անցնելով արյան մեջ, անընդհատ շրջում է ամբողջ օրգանիզմում, ողողելով բոլոր օրգանները և ընտրելով իրեն համար զարդանալու նոր, հարմար օջախներ, ինչպիսիք են նշագեղձերը, հողերը, սիրտը, աչքերը և այլ տեղեր, որտեղ նա կանգ է առնում և առաջ տանում իր ավերիչ աշխատանքը, բորբոքելով տվյալ օրգանը:

Ես ուզում եմ այստեղ բերել հայտնի մասնագետների նկարագրած մի քանի դեպքեր, որոնք շատ ուսանելի են բոլորիս համար: Ահա թե ինչ է պատմում պրոֆ. Աղապալը: «Ըստստովում, հոդերի բորբոքումով հիվանդ մի կոլխոզնիկուհի, ընդունվում է ներքին հիվանդությունների կլինիկա. Երկար բուժելուց հետո, բժիշկները գտնում են, որ հիվանդի ներվերն են հիվանդ. այդ պատճառով նրան տեղափոխում են ներվային կլինիկա:»

Այստեղ էլ երկար ժամանակ ապարդյուն բուժելուց հետո, հիվանդին փոխադրում են ինձ մոտ: Բերանի քննությունը ցույց տվեց, որ ատամներից շատերը փչացած են և ծածկված ատամնաքարերի հաստ շերտով:

Հիվանդը հոդերի ցավից հաղիվ էր քայլում, քանի դնում նիհարում էր և միաժամանակ ջերմում:

Ակտեցին նրան բժշկել և հիվանդ ատամները հանել, հիվանդի վիճակը դնալով վատթարանում էր. նա արդեն քայլել չէր կարողանում և բուժելու համար պատգարակով էր տեղափոխվում:

Երբ այդ կնոջ բերանը կարդի բերվեց, նրա զրությունը սկսեց հետզետե լավանալ, նա շուտով դուրս գրվեց ու վերադարձավ տուն:

Մի քանի ամիս հետո, այդ կոլխոզնիկուհին եկավ ինձ մոտ. նա այնքան էր լավացել, որ ես նրան չճանաչեցի»*):

Պրոֆ. Էնտինը (Լենինգրադ) նկարագրում է այսպիսի մի դեպք.

«Մի հիվանդ 2 և կես տարվա ընթացքում գիմել էր բազմաթիվ բժիշկների, սրտի հիվանդությունը բուժելու համար, որը ընթանում էր միաժամանակ ջերմաստիճանի բարձրացումով: Ենթարկվել էր բազմաթիվ և բազմատեսակ քննությունների, բայց առանց որևէ արդյունքի, իսկ յոթ հիվանդ ատամներով նրա բերնախոռոչին ոչ ոք ուշադրություն չէր դարձրել: Վարակի այդ օջախները վերացնելուց հետո, հիվանդն առողջացել է և իր իսկ խոսքերով «ազատվել բուժվելու անհրաժեշտությունից»:

Նույն պրոֆ. Էնտինը նկարագրում է մի ուրիշ դեպք, երբ հիվանդ բանվոր Ս-ն, 30 տարեկան, հինգ ամիս լենինգրադի հիվանդանոցներում անհետեանք բուժվելուց հետո, տեղափոխված է եղել նրա կլինիկան, «Երիկամների հիվանդություն» դիագնոզով: Հիվանդը ջերմելիս է եղել, նրա երեսը, ձեռները և ոտները ուռած են եղել. երկու աչքերի աեսողությունը ևս չափազանց ընկած: Բերնախառաչի քննությունից պարզվել է, որ հիվանդն ունի նշագեղձերի խրոնիկ բորբոքում և բերանում կան քայլայլած վեց ատամների արմատներ: Հեռացված արմատների քննությունը ցույց է տվել, որ նրանք վարակված են հիվանդածին միկրոբներով:

*) Պրոֆ. Ազապով „Բերեգի զубы“ էջ 18:

Ապամամների արմատները հեռացնելուց հետո, հիվանդը
աբսու կերպով սկսել է առողջանալ, ջերմաստիճանը
հասել է նորմալի: 16 օրից հետո տեսողությունն սկսել
է նույնպես մոտենալ նորմալին, իսկ բորբոքված նշա-
գեղձերը, որոնց սկզբում պետք էր օպերացիայի են-
թարկել և հեռացնել, այնքան էին առողջացել, որ
այլևս օպերացիայի կարիք չկար: Հիվանդը դուրս է
գրվել առողջացած և գործարանում անցել է աշխա-
տանքի: Ինն ամիս հետո կատարված բազմակողմանի
քննությունը ոչ մի հիվանդագին երևույթ չի հայտա-
բերել, հիվանդի տեսողությունը վերականգնել է, նա
ոչ մի գանդատ չունի և իրեն միանդամայն առողջ է
համարում»*):

Հիվանդ Բ.-Ն, 16 տարեկան, արդեն հինգ տարի է
իրեն հիվանդ է զգում, երեկոները տաքությունը
բարձրանում է, արյան մեջ հայտաբերված է վարակ,
սիրտը նույնպես հիվանդ է, ընդհանուր դրությունը
ծանր է, ջերմաստիճանը 39,5:

Ստորին ծնոտի 2 սեղանատամների արմատները
թարախակարված են: Ամեն տեսակի քննությունները
ոչ մի արդյունք չեն տալիս:

Հարցը պարզ է. տեղի ունի ատամնածին վտրակի
սրում:

Պրոֆ. Լուկումսկու խորհրդով, հիվանդը տեղա-
փոխվում է նրա կլինիկան: Այստեղ հեռացնում են հի-
վանդ ատամները. վարակի օջախները մաքրվում են:
Ութ օրից հետո հիվանդը դուրս է գրվում տաքությու-
նը իջած, իրեն լավ է զգում. դրանից մի շաբաթ հետո
հիվանդը զայխ է շնորհակարություն հայտնելու՝ իրեն
ատամնաբուժական հիվանդանոց ուղարկելու համար. և
իրեն զգում է միանդամայն առողջացած. ջերմաստի-
ճանը նորմալ է, սրտի աշխատանքը միանդամայն կա-
նոնավորվել է»:

Հարյուրամոր այսպիսի օրինակներ կարելի է բե-
րել, երբ հիվանդ ատամները բուժելուց կամ հանելուց
*) Գախունդ էնտին „Տերապևտիկ. ստոմատոլոգիա“ էջ 396:

Հետո՝ բուժվել են շատ հիվանդություններ, որոնց
պատճառները երկար ժամանակ չեն հայտաբերվել,
իսկ հիվանդներն ապարդյուն կերպով բուժվել էին զա-
նազան մասնագետների մոտ, առանց ուշադրություն
դարձնելու իրենց ատամների և բերնախռոռչի դրության
վրա:

17. Ա.Տ.Ա.ՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Այսպիսով մենք նկարագրեցինք այն բոլոր պայ-
մանները, որոնք անհրաժեշտ են ատամների նորմալ
դարդացումն ապահովելու համար, իսկ դա մեր օրդա-
նիզմի ընդհանուր դարդացման գրավականն է:

Մնում է մի քանի խոսք ասել ատամների այն ամե-
նօրյա խնամքի մասին, որ անհրաժեշտ է կիրառել
որպեսզի առողջ ատամները մինչև վերջն էլ առողջ ու
լիարժեք մնան և կարողանան նորմալ կերպով կատարել
իրենց աշխատանքը:

Ի՞նչ պայմաններ են դրանք և ի՞նչպես պետք է
կազմակերպել ատամների խնամքը: Քանի որ բերնա-
խռոռչում զոյություն ունեն բազմաթիվ միկրոբներ,
որոնք քայլքայելով ատամների արանքներում մնացած
կերակրի մնացորդները և թթուներ առաջացնելով, լու-
ծում են ատամների կարծր հյուսվածքները և այդպի-
սով ճանապարհ բաց անում միկրոբների համար դեպի
էմալի և զենտինի խորքերը, որն այդ վարակի ար-
տադրած թույներից բորբոքվում է, սկսում է նեխվել
և այդքան տանջանքների ու բարդությունների պատ-
ճառ դառնում, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ,
այն է՝ առավոտերեկո ողողել և ատամները լվալ խոզա-
նակով: Խոզանակը հեշտությամբ մաքրում է ատամների
արանքները և բերանի անկյունները, որտեղ հավաք-
վում են կերակրանյութերի մնացորդները: Միայն ան-
հրաժեշտ է նախքան գործածելը՝ խոզանակը լվանալ և

մի քանի բովեով դնել եռացրած ջրի մեջ։ Դա արվում
է երկու նպատակով։ նախ՝ խողանակը ախտահանելու
և երկրորդ՝ նրա մազերը փափկացնելու համար։

Առամերը լվանալիս, խողանակը սկզբում պետք է
քսել հորիզոնական ուղղությամբ, իսկ երկրորդ ան-
գամ՝ վերից վար և ընդհակառակը, որից հետո խողա-
նակը չպետք է դնել պատահական տեղ, այլ չորացնել
և պահել հատուկ տուփի մեջ, կախված դրությամբ։

Առողջ բերանի համար անհրաժեշտ չեն զանազան
պատահներն ու փոշիները. կարելի է բավականանալ
խողանակով ու մաքուր ջրով. իսկ հիվանդ լնդեր ունե-
ցողներն ընդհանրապես չպետք է խողանակ գործածեն
մինչև լնդերի առողջանալը, և պետք է անպայման,
որքան կարելի է չուտ, գիմեն ատամնաբուժին։ Լնդերի
բորբոքումների ժամանակ, խողանակը կարող է միայն
ամելի վատացնել դրությունը։

Լնդերի զանազան հիվանդությունների դեպքում
գործածվում են հատուկ ատամնափոշիներ, որ նշանա-
կում է ատամնաբուժը։

Բերանը ողողելը պետք է նույնպիսի անհրաժեշտ
սպիռություն լինի, ինչպես օրինակ՝ լվացվելը։ Ավե-
լին—բերանը ողողելը պետք է դառնա պահանջ, որով-
հետև գա ոչ միայն թարմացնում է բերանի խոռոչի
լորձաթաղանթը, այլև լվանում ու դուրս է բերում
ատամների արանքներում մնացած նեխված նյութերը,
պակասեցնում է բարմամիլիոն միկրոների քանակը,
դուրս է բերում նաև ատամների վզիկների շրջանում
գոյացող փառը և նրա մեջ դանվող կրային աղե-
րը։ Դրանք նստվածք են տալիս ատամների վզիկների
մոտ և քիչ-քիչ կուտակվելով, գոյացնում են ատամ-
նաքարերի հաստ շերտեր, որոնց վնասակարության
մասին մենք արդեն խոսել ենք։

Այժմ միայն կընդգծենք, որ նրանք, կուտակվելով
ատամի վզիկի մոտ, անջատում են լինդը ատամից,
այնտեղ գոյացնելով մի ճեղք, որը միկրոների համար
ծառայում է որպես շատ հարդար վայր թե զարդանա-

լու և թե գործելու համար: Բացի դբանից, ատամնաքարերը ճնշում են լնդեզը, կամաց-կամաց բաց են անում ատամների վղիկները, առաջացնելով վղիկների սուխալի գերզգայնությունը, երբ որևէ բանի կպչելը հիվանդին զդալի ցավ է պատճառում: Վղիկների մոտ լնդերը սկսում են բորբոքվել և թարախակալել: Առամնաքարեր ունեցողներն իրենք հեշտությամբ հայելու մեջ կարող են ստուգել այդ դրությունը:

Լնդակզրից սկսում է թարախ հոսել և այսպիսով սկիզբ է առնում այն երկարատե ու տանջալի հիվանդությունը, որ կոչվում է «լնդային թարախահոսություն» (սիորեյա) և որից հիվանդներն ամիսներով բռնժվում են: Լնդերի թարախահոսությունը շատ համառ հիվանդություն է, բայց որովհետեւ նա սկզբնական շրջանում առանձնապես չի անհանգստացնում հիվանդին, դրա համար էլ վերջինս ժամանակին ուշադրություն չի դարձնում նրա վրա:

Անհրաժեշտ է հենց սկզբնական շրջանում հեռացնել ատամնաքարերը, որոնք այդ հիվանդության պատճառներից ամենագլխավորն են հանդիսանում:

Հիվանդներից ոմանք, շատ վատ սովորություն ունեն, — չեն բուժվում մինչև վերջին մոմենտը, մինչև որ խնչպես ասում են՝ «դանակը ոսկրին է հասնում», իսկ հիվանդությունը քանի գնում խորանում է, ատամները սկսում են շարժվել, շատ անգամ փոխում են իրենց սկզբնական դիրքը, ծոմովելով կամ պտտվելով իրենց առանցքի շուրջը, և վերջիվերջո սկսում են թափվել: Ահա այդ ժամանակ, հիվանդը հիշում է բժշկին և խնդրում փրկել իր ատամները, բայց միշտ չէ, որ այդ հաջողվում է:

Բոլոր հիշյալ բարդություններն ու ավերածությունները չեն լինի, եթե հիվանդները լավ հիշեին մի բան. «ավելի հեշտ է կանխել հիվանդությունը, քան բուժել»: Սա մի այնպիսի պարզ ճշմարտություն է, որ ապացուցելու կարիք չունի:

Ժամանակին բուժվելով, հիվանդները խուսափած

կլինեին շատ դժվարություններից և բարդություններից, ժամանակից շուտ չէին զրկվի այն թանկագին և կարեռը օրդանից, ինչպիսին է ատամը, չէր ընդհատվի նրանց աշխատանքը արտադրության մեջ, այսպիսով միլիոնավոր ռուբլիների խնայողություն կտրվեր ովետությանը և կխնայվեր թանկագին ժամանակի:

18. ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհրաժեշտ է մի քանի խոսքով կանգ առնել այն մի շարք վատ և վնասակար սովորությունների վրա, որոնց մենք հաճախ ականատես ենք լինում:

1. Թե փոքրերը և թե մեծերը սովորություն ունեն կաղինը, ընկույզը և այլ կոշտ նյութերը անպայման ատամներով կոտրել, չնայելով, որ միշտ էլ հնարավորություն կա օդավիլու մուրճից, քարից և այլն:

Դա պետք է բացատրել միայն անփոյթ վերաբերմունքով դեպի ատամները: Ճիշտ է, էմալը պողպատի նրան դիմացկուն է, բայց հեշտությամբ կոտրվում է, եթե նրան հարվածում են որևէ պինդ բանով:

Ատամներով կոշտ իրեր կոտրելիս, երբեմն նրանից պոկվում են զգալի կտորներ կամ առաջանում են ճեղքվածքներ, որոնք այդ կետերում տատամնակերի սկսվելու պատճառ են դառնում:

2. Ատամների խոռոչները կամ նրանց արանքները լուցկով, փետուրով, ասեղով և այլ իրերով քչփորելը նույնպես շատ վնասակար և վտանգավոր սովորություն է: Դրանով մենք վիրավորում ենք լնդապտկիկները, որոնցից հաճախ արյուն է հոսում: Այդպիսով վարակի դուռ բանալով, ինքներս մեր ձեռքով վարակ ենք մատնում լնդերի մեջ, որոնք դրանից բորբոքվում են և ահագին անհանգստություն պատճառում:

Երբեմն վատ կատարված լիցքերի կամ դրանց մաշվելու հետևանքով զոյանում են խոռոչներ, ուր մըտնում են կերակրանութերը և խցանվում: Պետք է անմիջապես դիմել մասնագետին և միանգամից աղատվել

անտամները ամեն անդամ ուստելուց հետո վորպիրելու
անհրաժեշտությունից :

3. Կան այնպիսի արհեստավորներ, որոնք սովորություն ունեն առջևի ատամներն օգտագործել որպես գործիք. օրինակ՝ դերձակները թել կտրելու համար երբեք մկրատ չեն օգտագործում և օրական հարյուրավոր անդամ, երբեմն բավականին հաստ թել՝ կտրում են կտրիչներով: Դրա հետևանքով, հաճախ նրանց այդ ատամների արմատի վերնոսկիրը բորբոքվում է, իսկ ատամնամիջուկը մահանում և առաջ են գալիս բարդություններ: Կոչկակարները սովորություն ունեն առջևի ատամների արանքում մեխեր պահել, որը նույնպես վատ սովորություն է: Դրա հետևանքով երբեմն վնասվում է նղերի և լեզվի լորձաթաղանթը, վարակումներ և բորբոքումներ են առաջանում:

19. ՊՐՈՖԵՍԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՏԱՄՆԵՐԻ ԵՎ ԼՆԴԵՐԻ ՎՐԱ

Գրքույկիս վերջում անհրաժեշտ է նշել մի չարք մասնագիտություններ և արտադրության ճյուղեր, որոնցով զբաղվողները պետք է առավել ևս աշալուրջ և հոգատար լինեն դեպի իրենց բերնախոռոչը: Եթե մենք մարդ տարեկան գոնե երկու անդամ (6 ամիսը մեկ) պետք է լինի ատամնաբուժի մոտ, ստուգելու ատամների և բերնախոռոչի դրությունը կամ հեռացնելու կուտակված ատամնաքարերը, ապա արտադրության այդ ճյուղերում աշխատողները պետք է ստուգման ենթարկվեն 2-3 ամիսը մեկ անդամ, որպեսզի հնարավոր լինի իսկույն և ժամանակին միջոցներ ձեռք առնել հիվանդությունը կանխելու, կամ հենց սկզբից բուժելու համար:


Այդպիսի պրոֆեսիաների թվին են պատկանում հացի, հրուշակեղենի, շաքարի և այլ արտադրությունները, որովհետեւ ալյուրի և շաքարի փոշին, նստվածք տալով բերնախոռոչում, խմորման է ենթարկվում:

Յթե աշխատողը չի հետևում բերնախոռոչի անձնական
հիգիենայի կանոններին, չի մաքրում ատամները, նա
արագ կերպով ենթակա է դառնում ատամնակերով
հիվանդանալուն: Նույնը պետք է ասել նաև մետաղի
և քիմիական արդյունաբերության մեջ աշխատողների
ժամկետն, որոնք գործ ունեն, օրինակ, սնդիկի, կապա-
րի, ֆոսֆորի և այլ նյութերի հետ: Արդյունաբերու-
թյան մեջ պաշտպանական միջոցների (դիմակ և այլն)
կիրառումից բացի, պետք է խստիվ հետևել և կիրառել
այս կանոնները և ատամների ամենօրյա խնամքը դարձ-
նել այնպիսի մի սովորություն, ինչպիսին է ձեռներն
ու երեսը լվանալը: Որևէ անհանդստություն զգալու
դեպքում՝ պետք է անմիջապես դիմել մասնագիտական
բուժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

52

Նախարան	3
1. Ատամների սաղմնավորումը	5
2. Սննդի ազգեցությունը ատամների վրա	6
3. Բերանի խնամքը հղիության ընթացքում	6
4. Ատամների զարգացման հետծննդյան խնամքը	7
5. Սանկական հասակի հիվանդությունների ազգեցությունը ատամների սաղմների զարգացման վրա	8
6. Ատամների դուրս գալը (ծկթելը)	9
ա) կաթնատամներ	
բ) հիմնական ատամներ	
7. Ատամների դուրս գալու ժամկետների խախտումները,	
սրանց պատճառները և հետևանքները	11
8. Հարկավո՞ր է բուժել կաթնատամները թե ոչ	12
9. Ատամների կառուցվածքը	14
ա) արտաքին կառուցվածք	
բ) ներքին կառուցվածք	
10. Ատամները ի՞նչպես են ամրացած ծնոտին	17
11. Ատամների հիվանդության պատճառները	19
12. Ատամնակերի սկզբնական նշանները	20
13. Հետագայում ի՞նչպես է խորանում հիվանդությունը	21
14. Ո՞րն է պատահական դեղերով բուժվելու վնասակարությունը	22
15. Ի՞նչ բարդություններ են առաջացնում չբուժված ատամները	23
16. Ատամնակերի կապը ուրիշ հիվանդությունների հետ	25
17. Ատամների խնամքը	29
18. Վնասակար սովորություններ	32
19. Պրոֆեսիայի ազգեցությունը ատամների և լնդերի վրա	33



ՄՊՈՅՎԱՐԱՐՄԱՆԱԽՈՅ

Հ

Է մաղամիամ

Ծ յնեռդոյամերաս դիմնառմ . 1

Ը աղի դիմնառաս յմովիոքմբրա միմմՍ . 2

Ծ նոզբակմայ մալկուոյը յցնամոյ դմադմ . 3

Ծ զցնամոյ մալրմմնամք մանցարդար դիմնառամ . 4

Հ ացմբրա դիմմմոյթորմայի՞ դիմասա՞ մաթամմաՍ . 5

Ց աղի մանցարդար դիմներաս դիմնառաս յմովի

Ց (յյմիմ) յյաք սպոր դիմնառամ . 6

Դմնառամկամ (ա

Դմնառամ մաթամնի՞ (գ

Ե յյդմնառամիմնաս յոյաք սպոր դիմնառամ . 7

Տ յյդմմամոմք և յյմմանասար ըմադս

Տ յո մի յյմնառամկամ յմեռոյ չ դոյիամիամ . 8

Տ յյգնայըոռոպամ դիմնառամ . 9

Գծայըոռոպամ մհցառիա (ա

Գծայըոռոպամ մհցդմմ (գ

Տ միտոմն ճաքաղնաս մմ սմբամ՞ի յյմնառամ . 10

Տ յյդմոամոսար մալկուորմայի՞ դիմնառամ . 11

Տ յյմմմամշմ մաթամմբիս յյմմամնառամ . 12

Տ յմովիոքմայի՞ նոտմաղոյ չ սմբամ՞ի նոյարաամ . 13

Պատ. Խմբակի՛ բժ. Ա. ՄԱՐԴԱՐԵԱՆ. ափասամբ. յոյմբոյոյ խողմբը մաթամառար չ մո՞ն . 14

Տ յմովիոռոյ յմովիոռոյ յմովիոռոյ յմովիոռոյ . 15

Տ ամինոյ նոտմացասա մմ զմնատմոքմադ յմովիոռոյ . 16

Տ ՎՃ. 12669 Պատ. 467. Տիրագ 5000, Տպագր. 2 1/4 մամ. յյմնառա

Տ ոմք Ակարապպի՞ն էնապացրութան 2/XII-16 միմմանառամ . 17

Տ ՀՍՍՌ Մինիստրների Սոլոտին Էից Պոչիզր. Անքանամամէջնութակը . 18

Տ և Լոտպարան, Պօքնան, Վաթոյուս դայտասամբ . 19

Տ աղի իդմբմ և յյմնառաս յմովիոքմբրա դյահսմբող . 20

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010080

Phu 1 fl.

A II
16578

16578